«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում.

Դաստիարակ՝ Անի Ստեփանյան

Մանկապարտեզ՝ « ԶԱՆԳԱԿ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Դաստիարակի և ընտանիքի համագործակցության տեսական հիմքերը 5

1.1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիարակի և ծնողների միջև փոխազդեցություն. էություն, նպատակներ, խնդիրներ..... 5

1.2. Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման 7

Գլուխ 2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիարակի և ծնողների միջև փոխգործակցության ձևերը, պայմանները ու մեթոդները 12

2.1. Դաստիարակի և ծնողների միջև փոխգործակցության ձևերը 12

2.2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացում դաստիարակի և ծնողների փոխգործակցության ժամանակակից պահանջներ..... 13

Եզրակացություններ 16

Օգտագործված գրականության ցանկ..... 18

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործացության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ներկայացնել մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների /նրանց օրինական ներկայացուցիչների/ հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում: Սույն նպատակի հիման վրա ներկայացնենք հետևյալ խնդիրները.

- Դիտարկել դաստիարակի և ընտանիքի համագործակցության տեսական հիմքերը,
- Քննարկել նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիարակի և ծնողների միջև փոխազդեցության էությունը, նպատակները, խնդիրները,

- Ներկայացնել մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման,
- Դիտարկել դաստիարակի և ծնողների միջև փոխգործակցության ձևերը,
- Ուսումնասիրել նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացում դաստիարակի և ծնողների փոխգործակցության ժամանակակից պահանջները:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ուսումնասիրությունը հիմնվում է ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա մանկավարժների աշխատանքների վրա:

Աշխատանքի համար հիմք են ծառայել համապատասխան գրականության ուսումնասիրման, համեմատական վերլուծության, առաջավոր փորձի ուսումնասիրման ու ընդհանրացման, դիտման և հետազոտության մեթոդները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից երկու գլուխներից, թվով չորս ենթագլուխներից և շարադրված է 17 էջի սահմաններում:

Գլուխ 1. Դաստիարակի և ընտանիքի համագործակցության տեսական հիմքերը

1.1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիարակի և ծնողների միջև փոխազդեցություն. էություն, նպատակներ, խնդիրներ

Ընտանիքի դերը հասարակության մեջ անհամեմատելի է որևէ այլ սոցիալական ինստիտուտի հետ, քանի որ հենց ընտանիքում է ձևավորվում և զարգանում նախադպրոցական երեխայի անհատականությունը, և սոցիալական դերերը յուրացվում են նրա կողմից: Մարդը ընտանիքի հետ կապը զգում է իր ողջ կյանքում: Ընտանիքում դրվում են անհատի բարոյականության հիմքերը, ձևավորվում են վարքագծի նորմեր, բացահայտվում են անհատի անհատական որակներն ու կարողությունները: Խոսելով ընտանիքի ներկայացուցիչների հետ նախադպրոցական ուսումնական հաստատությունների փոխգործակցության կարևորության մասին, պետք է ասել, որ այսպիսով տեղի է ունենում նախադպրոցական կրթության ողջ համակարգի զգալի թարմացում: Աշխատանքի նոր ձևերի կիրառման ակտիվ որոնում կա, ծնողների հետ փոխգործակցությունն իրականացվում է ոչ միայն հոգեբանական և մանկավարժական աջակցության, այլև նախադպրոցական ուսումնական հաստատությունների կյանքին ակտիվ մասնակցության ձևով: Նման աշխատանքը նպաստում է նախադպրոցական տարիքի երեխայի ավելի ներդաշնակ զարգացմանը: Այն օգնում է փոխկապակցված, համակարգված լուծել կրթության հարցերը՝ ազդելով ամենախնդրահարույց կետերի վրա:

«Մանկավարժական փոխազդեցություն» հասկացությունը ստացվել է Վ.Լ. Զագիկը, Լ.Ա.Լևշինը, Հ.Ջ. Լիիմեցը և ուրիշներ [Загик, Л.В. Воспитателю о работе с семьёй: Пособие для воспитателя детского сада / Л.В. Загик. - М.: Просвещение, 2009. - 192 с.]: Մանկավարժական փոխազդեցությունը բարդ գործընթաց է, որը բաղկացած է բազմաթիվ բաղադրիչներից՝ դիդակտիկ, կրթական և սոցիալ-մանկավարժական:

Վ.Ն. Մյասիշչևը կարծում է, որ փոխազդեցությունը որոշակի համատեղ գործունեության կազմակերպման միջոց է, որն իրականացվում է սոցիալական ընկալման հիման վրա և հաղորդակցության միջոցով [Мясищев, В.Н. Психология отношений: Избранные психологические труды / Пд ред. А.А. Бодалева. - М.: Модэк МПСИ, 2010. - 150 с. էջ 56]: Այս փոխազդեցության արդյունքը որոշակի

հարաբերություններ են, դրանք, լինելով փոխգործակցության ներքին անձնական հիմքը, կախված են անհատների վերաբերմունքից, փոխազդողների դիրքից: Եթե փոխազդեցությունը տեղի է ունենում երկու կողմերի համագործակցության պայմաններում, և ոչ մեկի ազատությունը ոտնահարված չէ, ապա այն ծառայում է որպես ճշմարիտ հարաբերությունների դրսևորում:

Նախադպրոցական մանկավարժների՝ իրենց սաների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ փոխգործակցության հիմնական նպատակն է, առաջին հերթին, մասնագիտական օգնությունը ընտանիքին նախադպրոցական տարիքի երեխային դաստիարակելու հարցում՝ միևնույն ժամանակ ոչ թե փոխարինելով, այլ լրացնելով և ապահովելով նրա կրթական գործառույթների առավել ամբողջական իրականացումը: Ընտանիքի և դաստիարակի միջև փոխհամագործակցության նպատակներն են՝

- նախադպրոցական տարիքի երեխայի կարիքների և հետաքրքրությունների իրականացում.
- նախադպրոցականների կարողությունների զարգացում՝ հաշվի առնելով տարիքը և անհատական առանձնահատկությունները.
- երեխայի դաստիարակության հարցում ծնողների միջև պատասխանատվության և պարտականությունների բաշխում.
- աջակցություն ընտանիքի տարբեր սերունդների միջև հարաբերություններում բաց լինելուն.
- ընտանեկան ավանդույթների ձևավորում և պահպանում.
- երեխաների անհատականության ընդունում և ըմբռնում, հարգանք և վստահություն նրանց նկատմամբ որպես անհատի [Кальянова, Н.Д. Взаимодействие педагогов и родителей в интересах ребёнка/ Н. Д. Кальянова // Семья в современном обществе (сб. тезисов III окруж. конференции психологов). - Н - Мар, 2007. - էջ. 7-11]:

Այս նպատակը կարող է իրականացվել հետևյալ խնդիրների միջոցով.

- փոխազդեցություն ծնողների հետ՝ ուսումնասիրելու իրենց ընտանիքի միկրոմիջավայրը.

- ընտանիքի ընդհանուր մշակույթի խթանում և կատարելագործում.

-ծնողների հոգեբանական և մանկավարժական կրթություն.

- երեխաների ծնողներին գործնական օգնություն ցուցաբերել նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելու գիտելիքների, հմտությունների, փորձի հիմունքների փոխանցման միջոցով.

- ծնողների հետ համատեղ համագործակցության տարբեր ձևերի կիրառում՝ հիմնված աշակերտների ընտանիքների նկատմամբ անհատական տարբերակված մոտեցման վրա:

Ա.Վ. Զապորոժեցը առանձնացնում է նախադպրոցական ուսումնական հաստատության ընտանիքի հետ աշխատանքի երկու հիմնական խնդիր [70]: Առաջին խնդիրը յուրաքանչյուր երեխայի ընտանիքի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելն է, նախադպրոցական երեխայի դաստիարակության, կրթության և զարգացման համար ջանքերի համադրումը, անհրաժեշտ մթնոլորտի ստեղծումը (հաշվի առնելով հետաքրքրությունները, կարիքները), հուզական փոխադարձ աջակցությունը և դժվարությունների համատեղ հաղթահարումը: Երկրորդ խնդիրն է ակտիվացնել և հարստացնել ծնողների կրթական հմտությունները, պահպանել վստահությունը սեփական մանկավարժական կարողությունների նկատմամբ [Основы дошкольной педагогики. /Под ред. А.В. Запорожца, Т. А. Марковой.- М.: Сфера, 2010.-272с., էջ 29]:

1.2. Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման

Երեխաների դաստիարակության գործընթացում անհատական մոտեցման հիմնախնդիրը միշտ էլ եղել է առաջադեմ մանկավարժության ուշադրության կենտրոնում: Արդեն Կոմենսկու մանկավարժական համակարգում շատ պարզ նշված է այն մասին, որ ուսուցման և դաստիարակության ողջ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Մակարենկոն գտնում էր, որ մանկավարժական մի շարք խնդիրների իրականացման համար շատ կարևոր է անհատական մոտեցման սկզբունքը՝ հատկապես կոլեկտիվի ձևավորման գործում, աշխատանքում, խաղում և այլն: Նա եկավ այն համոզման, որ

իրականացնելով անձնավորության դաստիարակության ընդհանուր ծրագիրը՝ մանկավարժ-դաստիարակն այնտեղ պետք է ներմուծի «ճշգրտումներ»՝ կապված երեխայի անհատական առանձնահատկությունների հետ: Երեխայի բնավորության մեջ ընդհանուրը և անհատականը խիստ փոխկապակցված են, որոնք ստեղծում են «խճճված հանգույցներ» [Макаренко А.С., О воспитании, Москва, 1988, 256 стр.]:

Երեխայի համար ընտանիքը համարվում է բնականաբար դաստիարակող միջավայր: Այն իր հետքն է թողնում երեխայի բնավորության և վարքի ձևավորման վրա: Ընտանիքում է ստանում աշխարհաճանաչման առաջին դասերը և ծանոթանում կյանքի տարրական կանոններին: Ստացած տվյալներն աստիճանաբար ընդարձակվում և բարդանում են այն չափով, ինչքանով զարգանում և աճում է երեխան: Երեխաների հետ աշխատող մանկավարժը պետք է ծանոթանա ընտանեկան դաստիարակության պայմաններին: Շատ ծնողներ չունենալով մանկավարժական կրթություն, ծանոթ չլինելով գիտական մանկավարժության այսօրվա նվաճումներին, լիարժեք չեն պատկերացնում անհատական մոտեցման անհրաժեշտության դերը: Անհատական մոտեցման արդյունավետ պայմաններից են համարվում մանկավարժների այցելություններն ընտանիք, որն աննպատակ չպետք է լինի: Առաջին այցելության ժամանակ դաստիարակը ծանոթանում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ, ստանում է որոշակի պատկերացում ընտանեկան պայմանների և դաստիարակության մասին: Զրուցելով ծնողների հետ անհրաժեշտ է բացահայտել ծնող-երեխա փոխհարաբերությունը, պարզել երեխայի տեղն ընտանիքում: Մանկավարժը կարող է եզրակացնել, թե ընտանեկան պայմաններն ինչքանով են ազդում երեխայի անհատական առանձնահատկությունների ձևավորման վրա [Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 2, Երևան, 2005, 232 էջ]:

Դաստիարակի աշխատանքն ընտանիքի հետ ամենադժվարն է, բայց ամենաանհրաժեշտը: Այս աշխատանքը երեխայի նկատմամբ անհատական մոտեցման անբաժան գործն է, յուրահատուկ օգնություն, միաժամանակ ոչ ցանկալի որակների կանխում, հոգատարություն նրա կյանքի նկատմամբ: Կազմակերպելով ծնողների հետ աշխատանք՝ դաստիարակն առաջին հերթին ուշադրություն է դարձնում ոչ լիարժեք ընտանիքներին, փորձում օգնել ծնողներին: Աշխատանքի

ձևերը շատ տարբեր են, բայց առաջնայինը մնում է անհատականը: Փորձված դաստիարակներն առանձնացնում են կոնկրետ հարցեր ծնողների հետ աշխատելիս: Միասնական դաստիարակչական աշխատանքի համար մշակում են ծրագիր: Նրանց պարտականությունները շատ են և բազմազան: Հաշվառումների մեջ պետք է նշեն երեխաների վարքագիծը գործունեության տարբեր տեսակներում, բնավորության գծերը և մտածեն երեխայի հետ աշխատանքի տարբեր ձևերի մասին: Ընտանեկան դաստիարակության մանկավարժությունը դաստիարկության մասին գիտության ամենադժվար բաժինն է: Մանկավարժական մտքի պատմության բոլոր փուլերում ընտանեկան դաստիարակության հարցերն ըստ ամենայնի արծարծվել են դասական մանկավարժների կողմից: Ընտանեկան դաստիարակության լուրջ թերություններից մեկն էլ այն է, որ շատ հաճախ ծնողները չեն ճանաչում երեխային, հաշվի չեն առնում նրա պահանջմունքները, նախասիրությունները, ցանկությունները և ձգտումները:

Դաստիարակության գործընթացում միասնականության բացակայությունն ընտանիքի անդամների միջև հանդիսանում է խոչընդոտ երեխայի անձնավորության ճիշտ ձևավորման համար: Սրա վառ օրինակ կարող են համարվել վարքագծի շեղումներն ընտանիքում և մանկապարտեզում: Անհրաժեշտ փաստեր արձանագրելու համար երեխային պետք է ուսումնասիրել թե՛ ընտանիքում, թե՛ մանկապարտեզում: Այս աշխատանքը պետք է կատարել շատ զգուշորեն, քանի որ այն նուրբ հարց է: Սկզբում անհրաժեշտ է խոսել դրական որակների, նրանց կարողությունների, հետաքրքրությունների մասին: Այդ ժամանակ ծնողները կհասկանան, որ դաստիարակները ոչ թե մտածված շեշտում են թերությունները, այլ փորձում են այնպես անել, որ երեխաները դառնան ավելի լավը: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ծնողների և դաստիարակների միջև ստեղծել վստահություն և փոխըմբռնում: Ցավով պետք է նշել, որ շատ ծնողներ անկեղծ չեն դաստիարակների հետ: Ամոթի զգացումից ելնելով թաքցնում են երեխայի իսկական վարքագիծը տանը, գովաբանում են երեխաներին: Դաստիարակներն այնքան զգույշ պետք է լինեն զրույցների ժամանակ, որ կարողանան «որսան» չասվածը: Այդ նպատակով պետք է խոսեն նաև ընտանիքի մյուս անդամների հետ՝ ստանալով լրացուցիչ տեղեկություն երեխայի մասին [Подласый И.П., Педагогика, Москва, кн. 2, 2003, 256 стр.]:

Փորձենք նկարագրել Ա.Ա-ի վարքագիծը: Նա մանկապարտեզի ավագ խմբի սան է: Աչքի է ընկնում անկարգապահությամբ և կոպտությամբ: Ծնողների հետ զրույցի ժամանակ պարզվեց, որ նրանք զարմացած են նրա վարքագծով, քանի որ, ըստ նրանց Ա.-ն շատ լսող, բարեհամբույր երեխա է: Պարզեցինք, որ նրանք թաքցրել են իսկական վարքը, որի մասին զգուշացրեց տատիկը. երեխայի համար չի եղել ոչ մի արգելք, միշտ զբաղվել է հեռախոսով կամ համակարգիչով, նեղացրել է փոքրիկ քրոջը, ոչ մեկին չի լսել: Ստանալով նման տեղեկություն՝ անհրաժեշտ է խորը վերլուծել այն և բացահայտել դաստիարակությունում եղած թերությունները և գտնել դրականին հասնելու ճիշտ ճանապարհը: Պարտավոր ենք ծնողներին հասկացնել մանկապարտեզի և ընտանիքի համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը: Որպեսզի ընտանիքի հետ աշխատանքն ունենա հաջողություն, որոշակի արդյունք, անհրաժեշտ է մշակել այնպիսի ծրագիր, որը կօգնի բացահայտել երեխային աշխատանքում, խաղում և գործունեության մյուս տեսակներում, ընկերական միջավայրում, բակում, ծնողների հետ շփման ժամանակ: Այս ուսումնասիրությունները կօգնեն դաստիարակին ընտրել զրույցի այնպիսի թեմաներ, որոնք օգտակար կլինեն բոլորի համար: Դաստիարակը կարող է ընտրել թեմաներ ամբողջ խմբի ծնողների համար՝ առանձնացնելով նաև անհատական աշխատանք առանձին ընտանիքների հետ:

Ծնողների հետ աշխատանքում կարևորում ենք զրույցների դերը: Ծնողների հետ անհատական զրույցները չպետք է լինեն պատահական առավոտյան երեխային ընդունելիս կամ երեկոյան տուն ճանապարհելիս: Նման դեպքում կարող են փոխանակել մի քանի նախադասություն: Զրույցները պետք է իրականացնեն ծնողների համար հարմար ժամանակ, հանգիստ պայմաններում: Նման զրույցների համար դաստիարակը շատ մանրակրկիտ պետք է պատրաստվի: Զրույցների ժամանակ պետք է ներկայացվեն նաև երեխայի կատարած աշխատանքները (նկարչություն, ծեփ, ապլիկացիա), որոնք հնարավորություն կտան ավելի լավ ճանաչելու երեխային և զրույցը կդարձնեն ավելի պարզ և հետաքրքիր: Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ: Ծնողների հետ աշխատելիս անհրաժեշտ է բացահայտել, թե երեխան տանը և մանկապարտեզում ինչպես է վերաբերվում աշխատանքին, աշխատելիս կամային

որակներ դրսևորում է, թե ոչ: Կարևոր է ծնողներին բացատրել, որ եզրակացություն անելիս ելնել տարբեր երևույթներից և ոչ թե հակառակը, սկզբում եզրակացնել, հետո արձանագրել փաստը [Վիրաբյան Քարմիլե Մանկապարտեզի և ընտանիքի կապը Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման, 2018 էջ 9]:

Գլուխ 2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիարակի և ծնողների միջև փոխգործակցության ձևերը, պայմանները ու մեթոդները

2.1. Դաստիարակի և ծնողների միջև փոխգործակցության ձևերը

Դաստիարակների և ծնողների միջև փոխգործակցության ձևերը նրանց համատեղ գործունեության և հաղորդակցության կազմակերպման միջոց է [Тонкова, Ю. М., Современные формы взаимодействия ДОУ и семьи / Ю М. Тонкова, Н. Н. Веретенникова // Проблемы и перспективы развития образования: материалы II междунар. науч. конф. (г. Пермь, май 2012 г.). - Пермь: Меркурий, 2012. - С. 71-74, էջ 71]: Գոյություն ունեն մանկավարժի և սաների ծնողների միջև փոխգործակցության ավանդական և ոչ ավանդական ձևեր, որոնց էությունը մանկավարժական գիտելիքների հարստացումն է: Ավանդական ձևերը բաժանվում են՝ կոլեկտիվ, անհատական և տեսողական-տեղեկատվական: Մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է ծնող-դաստիարակ (մանկապարտեզ-ընտանիք) համագործակցության հետևյալ ձևերը՝

- Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- Ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:
- Ծնողական համաժողովներ. դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:
- Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստաիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

• Գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:

• Այցելություններ ընտանիք.

• Բաց դռների օրեր.

• Հարց ու պատասխանի ցերեկույթներ.

• Մանկավարժական հյուրասրահ.

• Գաղափարների տոնավաճառ.

• Վստահության հեռախոս.

• Բարի գործերի օրեր.

• Կլոր սեղան.

• Զրույցներ՝ անհատական և խմբային.

• Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային.

• Անկետավորում.

• Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.

• Փոռատոներ և տոնակատարություններ.

• Սպորտային միջոցառումներ.

• Ցերեկույթներ:

• Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը:

2.2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացում դաստիարակի և ծնողների փոխգործակցության ժամանակակից պահանջներ

Նախադպրոցական մանկությունը մանկության հիմնական և ամենազգայուն շրջանն է: Այն դնում է անհատական զարգացման հիմքերը՝ հուզական, ֆիզիկական, ինտելեկտուալ, հաղորդակցական: Սա այն շրջանն է, երբ երեխան արդեն սկսում է

գիտակցել իր տեղը այս աշխարհում, երբ նա սովորում է շփվել հասակակիցների և մեծահասակների հետ: Իսկ դրա համար ամենակարեւորը ընտանիքն է: Նախադպրոցական կրթության ոլորտում այսօր տեղի ունեցող փոփոխություններն առաջին հերթին ուղղված են դրա որակի բարձրացմանը: Դա իր հերթին մեծապես կախված է նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի գործողությունների համակարգումից: Ընտանիքը նախադպրոցական երեխայի առաջին օղակն է, նրա բնական միջավայրը, երեխայի միջանձնային հարաբերությունների ձևավորման հիմնական աղբյուրն ու մոդելը, իսկ հայրն ու մայրը օրինակ են: Ընտանիքն ու նախադպրոցական ուսումնական հաստատությունը մեր ապագա սերունդը ձևավորող երկու աղբյուրներն են: Հաճախ և՛ ուսուցիչներին, և՛ աշակերտների ծնողներին պակասում է փոխըմբռնումը, նրբանկատությունը, համբերությունը, նույնիսկ միմյանց լսելու և հասկանալու ժամանակը, և այս ամենը ազդում է մեր երեխաների դաստիարակության վրա: Ժամանակակից ընտանիքները, որոնք տարբերվում են կազմով, մշակութային ավանդույթներով և կրթության վերաբերյալ հայացքներով, տարբեր կերպ են հասկանում երեխայի տեղը հասարակության կյանքում :

Շատերը կարծում են, որ նախակրթարանն այն վայրն է, որտեղ նրանք երեխաներին խնամում են միայն այն ժամանակ, երբ ծնողները աշխատավայրում են: Այնուամենայնիվ, նրանք բոլորը համախմբված են իրենց երեխայի համար ամենալավը ցանկանալու հարցում, բայց, ցավոք, ոչ բոլորն են պատրաստ արձագանքելու նախադպրոցական ուսումնական հաստատության անձնակազմի տարբեր նախաձեռնություններին և խնդրանքներին: Իսկ դաստիարակները կանգնած են հարցի առաջ՝ ինչպե՞ս ծնողներին հետաքրքրել համատեղ աշխատանքով: Ինչպե՞ս նրանց դարձնել ուսումնական գործընթացի մասնակից:

Դրական արդյունքի կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ ընտանիքը և մանկապարտեզը դիտարկվում են մեկ կրթական տարածքի շրջանակներում, ինչը ենթադրում է փոխազդեցություն, համագործակցություն նախադպրոցական մանկավարժների և ծնողների միջև երեխայի նախադպրոցական մանկության ողջ ընթացքում: Երեխայի շահերը կարող են տուժել, եթե նախադպրոցական

ուսումնական հաստատության աշխատակիցների և ծնողների հարաբերությունները չստացվեն։

Համագործակցությունը նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի փոխգործակցության հիմքն է [Митрофанова, О.Н. Технологии эффективного взаимодействия детского сада и семьи // Справочник старшего воспитателя дошкольного учреждения. - 2011. - № 2. - с. 44], այսինքն՝ գործունեության նպատակների համատեղ որոշում, միջոցների, ուժերի, գործունեության առարկայի համատեղ բաշխում, յուրաքանչյուր մասնակցի հնարավորություններին համապատասխան ժամանակին, աշխատանքի արդյունքների համատեղ մոնիտորինգ և գնահատում, այնուհետև կանխատեսում: Ծնողները դաստիարակների հետ համատեղ զարգացնում են նախադպրոցական երեխայի դաստիարակության, կրթության և զարգացման մեկ գործընթացում գիտակցված ներառման հմտությունները, իսկ դաստիարակը հաղթահարում է կրթական համակարգից «ծնողների հեռավորության» կարծրատիպը։ Մանկավարժական մշակույթի բարձրացումը լուծում է ընտանիքի կրթական ներուժի և դրա օգտագործման հակասությունը: Փոխազդեցության անբաժանելի մասն է դաստիարակի շփումը ծնողների հետ [Программа психолого-педагогической коррекции детскородительских отношений / Сост. Н.Р. Айвазова, Е.В. Фасыкова. - Волжск: МарГУ, 2005. - 27 с.]: Նախադպրոցական մանկավարժը պետք է տիրապետի վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների (օրինական ներկայացուցիչների) հոգեբանական և մանկավարժական կրթության մեթոդներին և միջոցներին, կարողանա նրանց հետ համագործակցել կրթական խնդիրների լուծման համար: Ոչ բոլոր ծնողներն ունեն երեխայի դաստիարակության համար անհրաժեշտ ընդհանուր մշակույթի և մանկավարժական գիտելիքների բավարար մակարդակ։ Նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի միջև փոխգործակցության նոր տեսակը, աշխատանքի նոր ձևերի կիրառումը որոշիչ պայման է նախադպրոցական կրթության համակարգի կողմից իր խնդիրների լուծման համար:

Եզրակացություններ

Այսպիսով, ամփոփելով կատարված հետազոտության արդյունքները՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Դաստիարակի և սաների ծնողների փոխգործակցության կարեւոր բնութագրիչներից են փոխըմբռնումը, փոխադարձ գիտելիքները, փոխհարաբերությունները, փոխադարձ գործողությունները, համատեղելիությունը, փոխադարձ ազդեցությունը: Նրանք դրսևորվում են տարբեր ձևերով՝ կախված այն պայմաններից և իրավիճակներից, որոնցում տեղի է ունենում նախադպրոցական ուսումնական հաստատությունում մանկավարժական գործընթացի մասնակիցների փոխազդեցությունը: Ինչպես ծնողների կոլեկտիվի, այնպես էլ առանձին ծնողների հետ աշխատանքը կունենա արդյունք, եթե լավ ենք տիրապետում ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին:

2. Դրական արդյունք կստանանք այն ժամանակ, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք և միասնական պահանջ երեխաների նկատմամբ: Նախադպրոցական մանկավարժը պետք է տիրապետի վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների (օրինական ներկայացուցիչների) հոգեբանական և մանկավարժական կրթության մեթոդներին և միջոցներին, կարողանա նրանց հետ համագործակցել կրթական խնդիրների լուծման համար: Ոչ բոլոր ծնողներն ունեն երեխայի դաստիարակության համար անհրաժեշտ ընդհանուր մշակույթի և մանկավարժական գիտելիքների բավարար մակարդակ:

3. Այն ծնողներին, ովքեր չունեն մանկավարժական կրթություն, անհրաժեշտ է տալ որոշակի գիտելիքներ տարիքային և անհատական առանձնահատկությունների մասին, ինչը հնարավորություն կտա երեխաների մեջ տեսնել և՛ դրականը, և՛ բացասականը և վերլուծել նրանց արարքները

4. Ընտանիքի և մանկապարտեզի կապը երեխաների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու կարևոր պայմաններից մեկն է: Դրա իրականացումը պահանջում է խոր գիտելիքներ, հաղորդակցական կարողություններ, հմտություններ և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վիրաբյան Ք., Մանկապարտեզի և ընտանիքի կապը Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման, 2018

2. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 2, Երևան, 2005, 232 էջ:

3. Загик, Л.В. Воспитателю о работе с семьёй: Пособие для воспитателя детского сада / Л.В. Загик. - М.: Просвещение, 2009. - 192 с.

4. Кальянова, Н.Д. Взаимодействие педагогов и родителей в интересах ребёнка/ Н. Д. Кальянова // Семья в современном обществе (сб. тезисов III окруж. конференции психологов). - Н - Мар, 2007.

5. Макаренко А.С., О воспитании, Москва, 1988, 256 стр.

6. Митрофанова, О.Н. Технологии эффективного взаимодействия детского сада и семьи // Справочник старшего воспитателя дошкольного учреждения. - 2011. - № 2. - с. 44

7. Мясищев, В.Н. Психология отношений: Избранные психологические труды / Пд ред. А.А. Бодалева. - М.: Модэк МПСИ, 2010. - 150 с.

8. Основы дошкольной педагогики. /Под ред. А.В. Запорожца, Т. А. Марковой.- М.: Сфера, 2010.-272с

9. Подласый И.П., Педагогика, Москва, кн. 2, 2003, 256 стр.

10. Программа психолого-педагогической коррекции детскородительских отношений / Сост. Н.Р. Айвазова, Е.В. Фасыкова. - Волжск: МарГУ, 2005. - 27 с.

11. Тонкова, Ю. М., Современные формы взаимодействия ДОУ и семьи / Ю М. Тонкова, Н. Н. Веретенникова // Проблемы и перспективы развития образования: материалы II междунар. науч. конф. (г. Пермь, май 2012 г.). - Пермь: Меркурий, 2012. - С. 71-74